Մանուկյան Լիլիթ
ԵՊՀ պատմության ֆակուլտետ, մագ. 2-րդ կուրս
էլ. փոստ՝ l_manukyan@yahoo.com

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Համընթաց քամին չի կարող ուղղորդել այն նավին, որը չգիտի, թե որ նավահանգիստն է ուղղորդվում *ՄՈՆՏԵՆ*

Այսպիսի իրավիճակում էր հայտնվել հայ հասարակությունը, հատկապես երիտասարդությունը անկախությունից հետո ստեղծված անցումային շրջանում: Անցումային շրջանը ենթադրում է հասարակական-քաղաքական, տնտեսամշակութային մի համակարգից անցում մեկ այլ համակարգ: Մեր դեպքում անկախությունից հետո խորհրդային սոցիալիստական ավտորիտար, «փակ» համակարգից անցում կատարվեց ազատական-ժողովրդավարական «բաց» համակարգ: Սա իր հերթին ենթադրում է կապիտալիստական, մասնավոր սեփականատիրական հարաբերություններ տնտեսության մեջ և բազմակուսակցական համակարգ քաղաքականության մեջ: Թվում էր, թե միայն այս ոլորտներում կատարված փոփոխություններով հնարավոր կլիներ երկիրը տանել այն ուղով, որով ընթանում են արևմտյան ժողովրդավարական երկրները: Բայց, ըստ էության, լուրջ ուշադրություն չդարձվեց հասարակության հոգեբանական, արժեհամակարգային ոլորտին, որտեղ ևս պետք է հիմնային փոփոխություններ կատարվեին, քանի որ նախորդ՝ խորհրդային շրջանից ժառանգած արժեհամակարգը կրող հասարակությունը չէր կարող ընդունել և իրագործել նոր տնտեսական-քաղաքական փոփոխությունները: Այստեղ գլխավոր խնդիրը խմբակենտրոն հասարակությունից մարդակենտրոն հասարակության անցումը ապահովելն էր: Խորհրդային հասարակությունը խմբակենտրոն էր, ուր անհատը ծառայում է խմբին, հանուն նրա բարօրության, և

ուր նրա անհատականությունը սահմանափակվում է խմբակային դոգմատիկ գաղափարների պայմաններում: Իսկ ազատական-ժողովրդավարական հասարակություններին բնորոշը մարդուն որպես կարևորագույն արժեք ընդունելն է, ուր ստեղծված են նպաստավոր պայմաններ մարդու անհատականության դրսևորման, ինքնիրացման համար:

Այսպիսի պայմանների ստեղծման գործունեություն առաջին հերթին պետք է իրականացնեին պետական իշխանությունները, որոնք պատասխանատու էին անցումային շրջանի բարեփոխումների համար: Անհրաժեշտ էր ստեղծել հասարակական համագործակցության նոր մեխանիզմներ և ձևեր, ուր մարդիկ հնարավորություն կունենային միաժամանակ և՛ իրենց անհատական կարողությունները դրսևորել և՛ համագործակցության ճանապարհով դրանք ծառայեցնել համընդհանուր, համազգային խնդիրների լուծմանը: Բայց տեղի ունեցավ հակառակ գործընթացը. հասարակական կյանքում տեղի էր ունենում անհատականությունների մերժման խորացում, որին զուգահեռ նկատելի էր խմբակային համագործակցության ձևերի տարածում և արմատավորում, երբ անձին կարևորելու չափանիշները հանգեցին խմբի համար նրա օգտակարության գործակցին[1]: Այս երևույթի խորացման և անհատի հնարավորությունների սահմանափակման պատճառները մի քանիսն էին. սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում, երբ բնակչության գերխնդիրը գոյատևելն էր, և չկային այդ խնդիրը կարգավորող պետական մակարդակով ստեղծված համագործակցության միջոցներ, հասարակության համագործակցությունը կազմակերպվեց միայն մեխանիկական հարթությունում, այսինքն՝ նեղ ընտանեկան-ազգակցական, հարևանական-թաղային խմբավորումների միջոցով շատ կենսական հարցեր լուծելով: Այսպիսի համագործակցությունը չի պահանջում ստեղծագործականություն, այն ավելի պահպանողական է, անհատական հատկանիշները ճնշող: Արդյունքում մարդկանց մոտ համահասարակական շահերը ածանցվեցին նեղ խմբակայինին:

Մեր գլխավոր խնդիրն է դիտարկել այս իրողության մեջ հայ երիտասարդությանը և նրա արժեքային կողմնորոշումների փոխակերպումները, քանի որ ցանկացած հասարակությունում տեղի ունեցող փոփոխություններին մեծապես արձագանքում է երիտասարդությունը, հասարակության մի խավ, որը մի կողմից հանդիսանում է նախորդ սերնդի արժեհամակարգի կրողը՝ կամ ապրած լինելով այդ միջավայրում կամ այդ արժեհամակարգով ապրած ծնողների դաստիարակությունը կրելով: Մյուս կողմից հենց այս խավը, գոյություն ունեցող կարգերում դեռևս իր հաստատուն տեղը չունենալով, նորամուծությունները ընդունում է ամենաակտիվ կերպով՝ ձգտելով նոր պայմաններում իր տեղն ու

[1] Տե՛ս **Թադևոսյան Ա.**, Անցումային շրջանի էթնոհոգեբանական փոփոխությունների առանձնահատկությունները Հայաստանում, Երևան, 1998:

դերը հաստատել: Նման պայմաններում սովորաբար մեծանում է ինքնադրսևորվելու ձգտումը: Բայց մեր հասարակությունում, ցավոք, դրա համար չստեղծվեցին անհրաժեշտ պայմաններ, ինչի արդյունքում գլուխ բարձրացրեցին մեխանիկական խմբերը՝ որպես իրենց անդամների խնդիրները լուծող հիմնական միջոցներ[1]: Արդյունքում ողջ հասարակությունը, այդ թվում և երիտասարդությունը պառակտվեց, մեկուսացավ առանձին խմբավորումներում, երբ ներհասարակական կյանքում նկատելի էր «մենք» և «նրանք» հակադրությունը: Գերակա դարձան այնպիսի արժեքներ, որոնք իրենց էությամբ ոչ կառուցողական էին՝ ապահովելով ոչ թե համազգային առաջընթաց, այլ հետընթաց: Դա տեղի ունեցավ շատ դեպքերում ազգային արժեքների բովանդակազրկմամբ, երբ նույն *պատիվ, հարգանք, շնորհք* արժեքների տակ ընկալվում էր նոր վարվելակերպ, այն է՝ պատվով մարդ է նա, ով կարողանում է ապահովել իր ընտանիքի նյութական բարեկեցությունը անկախ միջոցներից և ձևերից, անկախ այն հանգամանքից, որ նա հանրությանը, պետությանը վնաս տալով է իր կարիքները բավարարում[2]: Միևնույն ժամանակ ցանկացած անհատական ինքնադրսևորում, որը խմբին շոշափելի օգուտ չէր տալիս, բայց համազգային նշանակության օգուտ կարող էր տալ, չէր գնահատվում ըստ արժանվույն: Մեր պրակտիկայում բազմաթիվ են այնպիսի դեպքերը, երբ որևէ մեկի նվաճումները արժեզրկվում էին այս արտահայտությամբ. «մեջն ինչ, եթե բարեկամությանը ոչնչով չօգնեց»: Հենց սա էլ համազգային, համահասարակական գիտակցության բացակայության մասին է խոսում:

Ստեղծված ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում, երբ մարդկանց գերխնդիրը ֆիզիկական պահանջմունքները բավարարելն էր, մարդիկ մասամբ կամ լիովին զրկվեցին հոգևոր պահանջմունքներից՝ ձեռք բերելով այսպես կոչված «գոյատևողի հոգեբանություն»[3], ուր գոյատևելու մտքից բացի ստեղծագործականության և զարգացման միտք չէր կարող լինել:

Այսպիսի մթնոլորտում երիտասարդության մեջ ի հայտ են գալիս տարբեր, իրենց բնույթով իռացիոնալ սոցիալ-հոգեբանական կողմնորոշումներ, որոնք փորձել ենք բնութագրել Էրիխ Ֆրոմի[1] առանձնացրած հոգեբանական տիպերով՝ «յուրացնող-կլանող», «շահագործող», «կուտակող», «շուկայական» կողմնորոշում ունեցողներ: Առաջին տիպին պատկանողները իրենց բարօրությունը կապում են ոչ թե իրենց իսկ կարողությունների հետ, այլ մեկ ուրիշի՝ վերջինիս ենթարկվելու գնով նրանից հոգևոր և նյութական բավարարվածություն ակնկալելով: Այսպիսի մարդիկ սիրում են հետևել արդեն իսկ որոշված բանաձևերի՝ լինելով պասիվ և չձգտելով սեփական գաղափարներով ապրել: «Շահագործող» տիպին պատկանողները ևս, բոլոր բարիքների աղբյուրը իրենցից դուրս փնտրելով, ձգտում են այն ձեռք բերել մեկ ուրիշին իրենց ենթարկեցնելու և շահագործելու միջոցով: Սրանց առավել բնորոշ է ագրեսիվությունը, էգոիստությունը, սնափառությունը: «Կուտակողական» կողմնորոշման մարդիկ առավել հակված են ձեռք բերածը պահպանել, քան օգտագործել: Իրենց ունեցած նյութական և հոգևոր արժեքները չեն ցանկանում փոխանակել այլոց հետ՝ վախենալով դրանք կորցնելուց, դեմ են ամեն նորամուծության, որ կարող է փոփոխել ընդունված միօրինակությունը, որին նրանք հարմարվել են: Փաստորեն նրանք իրենց «ես»-ը նույնացնում են իրենց ունեցածի հետ: Ինչ վերաբերում է «շուկայական» կողմնորոշմանը, այն կապիտալիզմին բնորոշ երևույթ է, երբ մարդը, հեռանալով իր սեփական «ես»-ից, ձգտում է առաջնորդվել այն չափանիշներով, որոնք ընդունված են հասարակական միջավայրի կողմից, և որոնց միջոցով նա կարող է վճարվել: Ամենակարևոր նախապայմանը հաստատուն արժեքներ չունենալն է, որպեսզի անհրաժեշտ պահին անհրաժեշտ պայմաններին հարմարվի: Այսպիսի մարդկանց համար գնահատելի են համարվում զուտ արտաքին հատկանիշները՝ գրավչությունը, ճարպկությունը, դիմացկունությունը, վստահելիությունը, որոնց համար տվյալ միջավայրում վճարում են և որոնց միջոցով հնարավոր է փող աշխատել:

Կողմնորոշման վերոնշյալ չորս տիպերը, ըստ էության, այս կամ այն ձևով խոչընդոտում են մարդու իրական «ես»-ի լիարժեք դրսևորմանը, անհատական հատկանիշների զարգացմանն ու դրանց միջոցով սեփական բարօրությունը ապահովելուն: Ի հակադրություն վերոնշյալ տիպերի Ֆրոմի կողմից առանձնացվում է «ստեղծագործական» կողմնորոշումը, որի տեր մարդիկ հաջողությունը և բարօրությունը տեսնում են իրենց մեջ, սեփական «ես»-ի կարողությունների բացահայտման և ստեղծագործաբար իրացման միջոցով: Միայն այսպիսի անհատների դրսևորման և համագործակցության շնորհիվ է հնարավոր ստեղծել մի հասարակարգ, ուր կբավարարվեն և՛ մարդու անհատական պահանջմունքները, և՛ հասարակական նշանակություն ունեցող խնդիրները:

---

[1] Գոյություն ունեն հասարակական համագործակցության 3 հիմնական ձևեր՝ մեխանիկական, օրգանական, վերացական: Առաջինը համագործակցության պարզագույն ձևն է՝ հիմնված ազգակցական, հարևանական և նման այլ կարգի նույնականության վրա, ինչը միայն ապահովում է խմբի գոյատևումը՝ մերժելով անհատականության ցանկացած դրսևորում, մինչդեռ օրգանական համագործակցությունը հիմնված է մասնագիտական նույնականության վրա, իսկ վերացականը, որը ամենաարդյունավետն է, հիմնված է գաղափարական նույնականության վրա, որի դեպքում դսևորվում է անհատականություն և ստեղծագործականություն:

[2] Տե՛ս Թաղևոսյան Ա., Հայաստանում արժեքային կողմնորոշումների ազդեցությունը հանրային կապիտալի ձևավորման գործընթացին, 21-րդ դար, 2(4), Երևան, 2004:

[3] Տե՛ս նույնի անցումային շրջանի էթնոհոգեբանական փոփոխությունների առանձնահատկությունները Հայաստանում, Երևան, 1998:

[1] **Фромм Э.**, Человек для самого себя; в кн. Психоанализ и этика, Москва, 1993., с. 61-75.

Ցավոք, հետխորհրդային Հայաստանում պայմանավորված ստեղծված սոցիալ-տնտեսական իրավիճակով, ինչպես նաև խորհրդային համակարգից ժառանգված մտածողությամբ գերիշխում էին առաջին չորս տիպերը: Երիտասարդության շրջանում առավել նկատելի էին «շահագործողի» և «յուրացնողի» կողմնորոշումները, երբ հնարավորություն չունենալով կամ չցանկանալով սեփական ուժերով որևէ բանի հասնել, շատերը ձգտում էին ենթարկվողի կարգավիճակով գոյատևել: Կար ընդհանուր տարածում ունեցող մտածողություն, որ սեփական ուժերով ոչինչ հնարավոր չէ անել և պետք է ենթարկվել նրան, ով իշխանություն ունի: Իսկ իշխանություն ունեցողների անվան տակ հասկացվում էր ոչ միայն պետական իշխանությունը, այլ տարբեր խմբավորումների գլուխ կանգնած, այսպես կոչված «վլաստ» ունեցող հեղինակությունները (հանցագործ, «թաղի տղա») և այլն: Այսպիսի մարդկանց համար արժեքներ դարձան վարքի այնպիսի նորմերը, ինչպիսիք էին կեղծավորությունը, քծնանքը, անսկզբունքայնությունը, ստորաքարշությունը: Իսկ ով իր ձեռքում քիչ թե շատ հեղինակություն ուներ, հանդես էր գալիս վերջիններիս շահագործելու կողմնորոշմամբ:

«Կուտակողական» կողմնորոշում ունեցողները առավել շատ հանդիպում են մեծահասակների շրջանում, քան երիտասարդության, ինչը պայմանավորված է նրանով, որ վերջիններս հենց խորհրդային արժեհամակարգի կրողներն են՝ կուտակող, պահպանող, ամեն նորը մերժող, արտաքին աշխարհից մեկուսացում: Չնայած դաստիարակության արդյունքում այս դիրքորոշումն ունեն շատ երիտասարդներ:

«Շուկայական» կողմնորոշումը ևս բավական տարածված էր, որը գնալով իրեն էլ ավելի է զգացնել տալիս. հեռանալով իրենց սեփական «ես»-ից՝ շատերը շարժվում են այնպիսի չափանիշներով, որպիսին նրանցից պահանջվում է փող աշխատելու նպատակով: Արդյունքում տեղի է ունենում հոգևոր մշակույթի նյութականացում, շուկայնացում և մեխանիկական վերարտադրություն՝ կենսապահովման համակարգում այն հնարավորինս կիրառելի դարձնելու համար[1]: Շատերը, այսօր այս կողմնորոշմամբ առաջնորդվելով, անկախ այն հանգամանքից՝ սիրում են, հետաքրքրված են տվյալ մասնագիտությամբ, թե ոչ, փորձում են իրենց դրսևորել այդ ուղղությամբ՝ հետագայում շուկայում իր տեղը ունենալու համար: Այնինչ պետք է ստեղծվեն այնպիսի պայմաններ, որտեղ յուրաքանչյուր անհատ իր իրական հնարավորությունները դրսևորելով կարող է ապահովել իր նյութական և հոգևոր պահանջմունքները՝ չհեռանալով իր իրական «ես»-ից: Եվ ի վերջո հենց այսպիսի մարդիկ փորձում են միայն իրենց արտաքին հատկանիշներով աչքի ընկնել,

[1] **Մելքումյան Հ.**, Արտաքին ազդեցությունները և մշակութային արդի գործընթացները ՀՀ-ում, Հայաստանի փոփոխվող արժեհամակարգը նոր սերնդի տեսանկյունից, 2007, էջ 75:

ավելի շուտ ստանձնած դերը խաղալ, քան խորքային ձևով իրագործել:

Այս ամենի կողքին հասարակության մեջ կա երիտասարդության մի հատված, որը կյանքին և ինքն իրեն այլ կերպ է նայում, իրական հաջողությունների աղբյուրը փնտրելով իր մեջ՝ իր իրական կարողությունների դրսևորման և իրացման միջոցով, ինչպես նաև շահագործելու կամ ենթարկվելու փոխարեն դիմացինի հետ համագործակցություն հաստատելու միջոցով: Անկախության հատկապես սկզբնական շրջանում հասարակական միջավայրը ամենից անբարենպաստն էր հենց այս կողմնորոշման անհատների համար, որոնք ըստ էության համընդհանուր տարածում գտած ոչ կառուցողական խաղի սահմաններից դուրս մնացին: Սովորաբար անցումային տիպի հասարակություններին բնորոշ է մարգիալ խմբերի առաջացումը, բայց մեր պարագայում առաջացավ պարադոքսային իրավիճակ, երբ նմանատիպ վիճակում հայտնվեցին այն անհատները, որոնց կարիքը ամենաշատը ուներ անորոշ դրության մեջ հայտնված հասարակությունը: Այստեղ հարց է առաջանում. էլ ինչու է հեղափոխություն տեղի ունենում, անցում կատարվում, եթե համապատասխան դերակատարներին հնարավորություն չի տրվում ինքնադրսևորման և համահասարակական օգտավետ գործունեություն ծավալելու համար:

Վերջին տարիներին ինչ-որ չափով նկատվում է խմբակայնության կազմալուծման և անհատականությունների դրսևորման աճ: Սա նշանակում է՝ հասարակության մեջ որոշակի նպաստավոր պայմաններ ստեղծվում են: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է պետական հստակ քաղաքականություն վարել այս հարցերի հետ կապված, ազգային երիտասարդական քաղաքականություն մշակել, ստեղծել հնարավորությունների դրսևորման և համագործակցության լայն դաշտ, ինչպես նաև անհատական, ազատ մտածողության ստեղծման և զարգացման հնարավորություններ: Որպես վերացական-գաղափարական համագործակցության միջոց մեծապես կարևորվում է երիտասարդական հասարակական կազմակերպությունների դերը, որոնցում համախմբված երիտասարդների գործողությունները կարող են սոցիալական, համահասարակական նշանակություն ունենալ: Ինչպես նշում է հայտնի սոցիոլոգներից Կարլ Մանհեյմը[1], երիտասարդությունը թաքնված ռեսուրս է ցանկացած հասարակությունում, պարզապես պետք է այն ճիշտ կազմակերպել և ուղղորդել: Եթե ցանկանում ենք դինամիկ կերպով վերարտադրվող հասարակություն ստեղծել, ապա պետք է ստեղծագործական կողմնորոշում ունեցող երիտասարդության առջև գործելու լայն ասպարեզներ բացել:

1 **Мангейм К.**, Диагноз нашего времени, Москва, 2004, с. 31-36.

Annotation

The article presents the socio-cultural transformations in post-Soviet Armenia in so called transitional period when according to the new political-economic reforms the value system of the population should also change in the result of which a "Group oriented" society should yield its place to an "Individual oriented" one. But that did not occur becouse of the disabilities of the country authorities in understanding the situation and making the nessecary reforms. That is why some irrational socio-pshychological features began dominating in the youth instead of thinking and acting in a productive way. In new independant Armenia the main value should be considered a "Man" itself and the main priority should be creating favourable and equal conditions for individuals to perform and realize their abilities in a creative way.

Аннотация

Статья представляет социокультурные преобразования в постсоветской Армении в так называемый переходный период, когда согласно новым политическим, экономическим реформам система ценностей населения должна также измениться в результате, которого "Группа ориентируемая" общество должна уступить место "Человеку ориентировало". Но это не произошло, потому что власти страны оказались неспособными пониманию ситуации и созданию необходимых реформ. Именно поэтому некоторые иррациональные социо-психологические показатели, начали доминировать в молодежи вместо того, чтобы думать и действовать производительным способом.

В новой независимой Армении главную ценность нужно считать непосредственно "Человека", и главный приоритет должен создавать благоприятные и равные условия для людей, выполнить и понять их способности творческим способом.